

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆ

ԴԵՊՒ ԱՊԱԳԱՆ



March 14th 1894

Wm. H. H. H.

Wm. H. H.



ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆ

891.99

S -


A 1705

ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ



1923

1934
JULY 11



1934

ԼՈՒՅՍԸ ԱՌԿԱՅԾՈՒՆ

Սե գիշերի խափարի մեջ խելառ քա-
մին և աղմկում, ժանդ ամպերը կուտակե-
լով:

Ողում սարսափն և տիրում, սոսկումը
վերահաս, անակընկալ վտանգի:

Ճոճումի ու յերերման մեջ՝ մահվան

դալուկն զգալով՝ խոնարհվում և ամեն ինչ ու անգուսպ քրքիջի խուլ ազմուկի ճնշումից՝ թավալվում, պարուրված փռշիացնող հառաչանքի գալարուն բազուկներում:

Աստղերը սգապատ ևլ ավել խորն են թաղվում խավարում, ևլ ավել ուժգին և մոնչում քամին, խառնելով ամպերի սև կուտակները դւ հանկարծ զզրոյունով ճայթում և փոթորիկը...

Անդգայանում և ամեն ինչ, փշրվում են ծառերի դալար ճյուղերը, արմատահան լինում անցյալի պատմություններն ընդգրկած դարավոր կաղնիներն ու իրենց ծանրությամբ մատաղ բույսերը ճնշում, վորոնց՝ մահվան տապնապի վերջին հառաչն ևլ վորպես արցունքի ու բողոքի մի շեշտ՝ խառնվում և փոթորկի հսկա ազմուկին:

Սարսափահար դողում և ծովն իր վեա վեհությամբ, փոթորկի խելահեղ բռնկումից հուսակտուր, կուտակած հսկա ալիքներ, անդորության փրփուրը բերնին, վայրի գրոհով ծեծում և ափի ժայռերն անսասան ու հեռ թռչելով, ևլ ավել ուժգին, ամպամերձ մեջքին և բարձրացնում իր գիրկը

ընկած, ու մահւման դողի հառաչը զսպած
փոքրիկ նավակը:

Տարերքի ահեղ մարտնչման հեծե-
ծանքն ու վիշտն և ափոված անթափանց
գիշերի սև խավարի մեջ, վորոնք սարերից
պոկված ժայռերի նման գլորվում ու ծան-
րորեն ընկնում են ցավատանջ յերկրի քըն-
քույշիկ կրծքին, վորը մահւման սարսուռով
բռնված, ծունկի եր յեկել ու աղերսապին
գթություն խնդրում: Վոսկրոս մահի սուր
գերանդին և սուլելով կաշւում նրան ու
վարդագուշն արյան ցայտումի հետ, անըզ-
գայացած նա վայր և ընկնում:

Անհուն ցավն և տարածվում:

Կծկվել ու լռել են բոլորը:

Ավերող ու խորտակող փոթորկի ան-
հուն ծարավով պապաքող խավարի վոպին
բուռն ցնծությամբ մահւման մերձեցումն և
հայանում, վոգեորելով փոթորկի հարված-
ներից ուռած կատաղիորեն մոնչացող ա-
լիքներին:

Անագորոյն ճնշումից տառապած սրբ-
տի դառնապին սուգն և միախառնվել գի-
տկնացած մարմիններից վեր յեկնող ծխին:

Մարտակոչի քայլերդի նման նոր ույժ
 ու թափ տալով, հաղթանակի աներկյալ աշու-
 թյան շեփորն և հնչվում: Ալիքները՝ ան-
 հունի մեջ փրփրազգեստ՝ կատաղության
 հուրը աչքերին, արյան ծարավը անհագ
 շուրթերին, սեղմած շարքերով ույժգին
 գրոհով կրկին հարձակվում, կրկին
 գրկում են իրեն մեջ ընկած նավակը այն
 վորը:

Տանջող սարսափի դողով բռնված,
 շնչադուսպ, անձայն, լուռ սպասում են...

Ժանդ ալիքները սուր ժանիքներով
 միշտ կրծոտում են կողերը նրա, մեջները
 առնում, գրկում են խախտ ու մեկ ել հան-
 կարծ շարտում մի կողմ ու նոր գրոհով վը-
 րան հարձակվում:

Իսկ նավը՝ տաշեղ, յերերուն թռչում,
 կանգնում և նրանց փրփուր մեջքերին ու
 սուր հեղնաքի ժպիտ շուրթերին, բարձր
 ծիծաղով արհամարհում և ջանքերը նրանց,
 ջանքերը ի դուր:

Նավար ամպերը ավել թանձրացած,
 խջում են ել ցած:

Ույժգին վորտախ, ահեղ կայծակի հար-

վածներին տակ շարունակվում և մարտը
սասանող...

Անհուն տարերքի անհայտին մասներ-
ված նստակը մենակ, իջնում և մեկ ցած,
անդունդը ծովի, թռչում և մեկ վեր, ամ-
պերը դեպի և ոճապտույտ կայծակի լույ-
սով փայլում և դեմքի ժպիտը անույշ, բա-
վականության կրակը անմար...

Հույսն ու հավատն և զորավիպ նրան:

Գալիք հանգստի մտապատկերով թե-
վափոր, զորեղ, ազատ թռչելով դու հա-
վածներից, իր սուր ծայրովը պատռում և
հսկա կուրծքը ալիքի:

Անսահման ձգտման և հանգրվանին
հասնելու տենչով հախուռն տարված, նա
մարտնչում և, նա պայքարում և անանցա-
նելի, անխորտակելի պատնեշների դեմ:

Թող ուռչի կուրծքը, տառապի սիրտը
ու փռիանա, թող արյունաքամ մարմինը
հյուծվի, նա չի թուլանա, նա չի հառա-
չի... մոտ և փարոսը, փարոսը պայծառ...

Կրկին նոր դրահ, կրկին կայծակի մի
ցատկոտ հարված...

Վտակրացած մահի քրքիջը սարսափ...

Ժանդ փոթորիկի հաղարձայն աղմուկ...
 Ու անհավասար պայքար դոյության...
 Կյանքը կանչում է այնպես քնքշո-
 րեն... Ժպտում է այնպես քաղցր, յերջա-
 նիկ...

Յեւ ճանկարծ .. սարսափ... մարեց
 փարոսը... Վերջին հույսն էլ պլպլաց ա-
 նույժ ու հանգավ անդարձ. .

Պայթում է կուրծքը...

Հզոր թևերը անույժ փշրված կախվե-
 ցին արնոտ, մի վերջին անգամ հառաչեց
 խորունկ ու ընկավ... ընկավ...

Անհուն անդունդը քարշում էր նրան:
 Փշրած թևերով, այժմ անվնաս, խըլ-
 ված իրենից և՛ հույս և՛ հավատ և հուրն
 հեզնանքի, նա իջնում էր ցած:

Ծովի հատակից հախուռն խմրով հա-
 վերժահարսերը յիկան շուրջպարով, փար-
 ված, պլվված սիրած ալիքին:

Բացեցին անզուսպ խնջույքի սեղան
 իրենց հաղթության:

Սեղան բոլորած, պար-յերգով ու-
 բախ, դատարկում էին լիք բաժակները
 կենացն հաղթության:

Խորտակված նավակն իջնում էր, իջնում, փրփուր գինին էր ձոնվում հաղթության, հավերժահարսյաց որհներգ էր յերդում քամին բազմաձայն ու ամպերն իջած, հաղթողին վայել պսակներ հյուսել, յերբ հանկարծ... հեռվում, լեռան ծերպերին մի լույս առկայծեց փայլուն ու դյութիչ...

Նոր ույժ ու նոր կյանք...


Զգտումի տենչը նորից բռնկվեց...

Ավելի՛ ույժգին, ավելի՛ կարող բարձրացավ նավակն...

Հեզնանքը նորից սահում էր դեմքին...

Նոր կյանք ու նոր թափ առած նա յեկավ ավելի՛ հպարտ, պարզեց թևերը ու դեպի լույսը սլացավ արագ... լույսը առկայծուն...

Յեվ այնպե՛ս պայծառ, ան՝ այնպե՛ս մոտիկ փայլում էր նա վառ...



ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ

Վաղաշնո Եղվարդ
Ամասումու հիւանդանոց

Հոգիս կաշկանդված ու կամքս ճնշված,
ապրում եմ անպետք, միալար սրեր ու թը-
վում ե ինձ, թե ել վերջ չկա:

Սենյակս փոքրիկ, մութը ու մռայլ,
ճնշում ե միտքս, ավելի ցայտուն պատ-
կերում իմ կաշկանդումի իրողությունը ու
փախչում եմ դուրս:

Դուրս, աղմկոտ փողոցները, ուր մի
պահ մոռացած ազատության սահմանափա-
կումը, ձուլվում եմ շարժվող բազմության
հետ ու աննպատակ, նրանց հետ քայլում
այս ու այն կողմ:

Հարազատ ու մոտիկ են ինձ այս բո-

լոր մարդիկ, որ աշխույժ քայլերով տրո-
րելով պարնան լպրծուն ցեխը, շտապում են
արթնացնելու մայր հողը, վորն իր կենսա-
տու կուրծքն ազատած ձյան հյուսերի կաշ-
կանդումից, պողարերության հույզերով լե-
ցուն, անուշ հեմում ե:

Ճանապարհին հանդիպում եմ ընկե-
րոջս:

Վեր հորիզոնների տակից ե նա, յև
այդ չգիտեմ, բայց նա իմ բախտակիցն ե,
իմ ընկերը՝ հարազատ իր հույզերով ու ձըգ-
տումներով:

Փոքրիկ ե, հազիվ քսան տարեկան,
թույլ, նիհար և հիվանդոտ, բայց յերբեք
այդ մասին չի խոսում ու չի սիրում յերբ
հիշեցնում ենք:

Այնքան յեռանդ և ուժ ե զգում իր
մեջ, այնպիսի վառ հավատ, վոր մենք բո-
լորս ակնածությամբ ենք նայում վրան ու
վողեորվում, հավատում մեր ապագային:

Նա մտախոհ ե, տխուր:

Չեմ հարցնում. պարզ ե:

Քայլում ենք լուռ:

Հանկարծ նա կանգ ե առնում: Տես-

նում եմ, ինչպես կուժքն ուռչում ե, աչքե
րը փայլում են և խեղդվող ձայնով ասում.—

—Այսօր ելի՛ր քերեցին... Յե՛րբ պիտի
վերջ ունենա:

Ու վոգևորված, յերկար թևերը թա-
փահարելով, հաղթանակի անյերկրայու-
թյունն ունեցող անընկճելի վիթխարիի պես
ազդարարում ե.—

--Յե՛վ կհասնի ժամը ու նրանք բոլո-
րը պատասխանի կկանչվեն իմ առաջ: Մենք
ենք, վոր վերջին դատաստանի դատավոր-
ներն ենք լինելու: Վա՛յ նրանց, բյժւր վա՛յ,
վորովհետեւ շատ խորն են իմ վերքերը և
յես ներել չգիտեմ:

Ահա տեսնում եմ, վոր հորիզոնը շա-
ռագունում ե, վոր նա կայծեր և շանթելու
և իր բոցերից խարույկ և կազմելու... Յե՛վ
շուտով, շուտով ե գալու այդ օրը, հատու-
ցումի այդ անեղ ժամը, յերբ հրդեհի բոցե-
րը լափելով հինը, նրա փլատակների վրա
ստեղծելու յեն նոր կյանքը, մեր կյանքը:

Բռնում եմ նրա թևն ու շտապում ենք
տեսնելու այն նորերին:

Շատ են. ձերեր, պատանիներ, կանայք:

Հոգնած են, սոսկալի հոգնած: Որեր, շաբաթներ քայլել են անընդհատ, սվինների տակ:

Բայց ընկճված չեն:

Այնպես ուրախ, գնդուն ծիծաղում են:

Սրտատուչ և մեր հանդիպումը, բայց վոչ արցունքոտ:

Արցունքը թույլերին և հատուկ:

Մենք ուժեղ ենք:

Յերկաթ և պետք:

Շիկացած յերկաթ պիտի լինի սիրտը, վոր հպումից այրի ու ճենճահոտը յերկինքն ի վեր բարձրանա, խանձող կայծերը չորս բոլորքը սփռե ու մտքերն այրե:

Վոգեկորված պատմում են իրենց յեկած վայրերից:

Փոթորկվել և ծովը, ալիքներն ափերն են ծեծում:

Սահմանավորումները խորտակվել ու միտքը սալին և դարբնում իր կամքը հուժկու:


Փրփրաղեղ ալիքների մի ցնցում, մի

անգուսպ ճաշթյուն... ու մենք նրանց հետ,
 նրանց մոտ լինելու հնարավորությունը կու-
 նենանք:

Ճաշից հետո մի անգիտակ թմրու-
 թյամբ, պառկած չոր առիտիս վրա, մը-
 տածում եմ:

Մտքերս կալեյդոսկոպի պես արագ
 պտույտներով հրհրում են միմիանց և ա-
 ռանց կանգ առնելու շտապում են, շտա-
 պում, կարծես վախենում են մի կարեվոր,
 շատ կարևոր բանից հետ մնալ, կորցնել
 այն իրենց հորիզոնից:

Յեվ պատկերների խառնիճազանչ ու
 մեկը մյուսից գունազեղ յերանգներով զսր-
 դարված այդ ալեկոծ ծովում լողում եմ և
 ինձ թվում է, վոր իմ ներկան մի յերազ և,
 մի չեղած անցյալ և վոր յես կանգնած եմ
 արշալույսի շողերով փակեղոծված կյանքի
 շեմքին ու գիտում եմ այն յիրջանկություն-



A 1705

նը, վոր փայլում է մարդկության դեմքին:

Հանկարծ դրսում, պատուհանիս տակ աղմուկ եմ լսում:

Ինձ թվում է, վոր դա յերկունքի սկիզբն է, վոր ահա ծնվելու յե վաղուց սպասած նոր կյանքի մանուկը, խարտյաշ ու հուր մազերով, վոր նա արդեն վոտքի յեկած սաստում է ծով ու յերկիր, վոր նա միացնում է իր մեջ աշխարհներն ու միմիանց ոտար, միմիանցից հեռու, բայց միմիանց հարապատ անթիվ, անհամար մարդկանց, տարրեր գույներով, տարրեր ծագումով:

Շտապով դուրս եմ յեկնում:

Փողոցում խռնված են բազմաթիվ մարդիկ, վորոնց կլոր շրջանակի մեջ բարձր կանգնած է նա ու իր յերկար թևերը թըռչունի թևերի պես անընդհատ թափահարելով, խոսում է ու նրա ձայնը և խոսքերը հիշեցնում են պատմական հաղարամյակների անցած մարգարեներին:

Ակամայից լսում եմ ինձ մոտիկ յեղած յերկուսի խոսակցությունը:

— Ի՞նչ է ասում այդ յերեխան, հար-

ցընում ե մեկը և ուշադրությունն ավելի լարում լավ լսելու:

— Կարծեմ հայտնում ե մի նոր քրիստոսի աշխարհ գալու մասին, վորը շուտով իշխանությունն յուր ձեռքն ե առնելու և վոր դրանից հետո այլևս մեզ չեն կարող տանջել ուրիշները, վոր բոլորս կապրենք ազատ ու ապահով:

Իսկ նա խոսում ե, բառերը ծանրորեն ընկնում են լսողների ուղեղներում և ճյուղավորված, ծաղկում:

Նա շտապում ե, բառերն արագ են հոսում. թվում ե, թե վախենում ե, վոր ժամանակն իրենից առաջ կանցնի, վոր ինքն այլևս նրա հետևից չի կարող հասնել:

— Տանջանքի միջով ե յերջանկության ուղին...

Նա փշածածկ ե, սուր խոցող, բայց այնքան ցանկալի, այնքան պաշտելի... և ասում եմ ձեզ, վոր նա մոտ ե... Այժմ դուք տառապում եք և հիմարների պես յենթակա ուրիշների բերտ կամքին, խոնարհվում նրանց առաջ ու չգիտեք թե ինչո՞ւ... Տանջանքը քաղցր ե, յերբ գիտես,

վոր նրան հաջորդելու և քո հանգիստը, քո կամքը, յերբ դիտես, վոր այնուհետև լույսի շողերն են վողողելու քո ճամբան: Սթափ-վեցեք և գիտակցական տանջանքն ընդունեցեք, վորպեսզի այն ձեր փրկությունը լինի: Փորձեցեք և կը տեսնեք, թե վորչա՞ն շաղկը և այդ գիտակցած տառապանքը, վորքան ել այն սուկալի լինի: Յեվ նա և, վոր բացելու և ձեր սուաջ փրկության դռները:

Յես այդ լուրն եմ բերում ձեզ և ա-վատում փրկությունը մոտալուտ:

Ի հարկե տիրողների անգիտակ իրա-վապահները մերկացրած սրերով ցրեցին հավաքվածներին, իսկ նրան բռունցքի ու կրունկի հարվածներով մեջերն առած տարան փակելու մութ նկուղում, վոր այլևս խոս-քը լսելի չլինի:

Ժպտում եր նա, հարածների ծանրու-թյան տնքոցի հետ ժպտում յերջանիկ ու գալիքի վառ պատկերը տեսած փայլուն ժը-պիտով: Յեվ այդ ժպիտն ավելի ազդու, ավելի գրավիչ եր, նա նոր յեռանդ ու թափ եր տալիս բոլոր կաշկանդված կամքերին:

Մի քանի որից հաջողվում է նրան հանել յուր փակված մենարանից, ստկայն խոնավ ու բորբոսնած ողբ և սառնությունն ազդել եին վրան: Աչքերն ավելի խորն եին ընկել, ձայնը խզվել ու հազում էր:



Կես գիշեր էր, յերբ ինձ հայտնեցին, վոր նա շատ վատեզգում իրեն:

Գնացի մոտը:

Յուր մութ ու լպրծուն պատերով սենյակում, հատակի վրա, հազիվ ծածկող վերմակի տակ պառկած էր, գունատ ու նիհար:

Վոչ վոք չկար մոտը:

Ուրախացավ և ուզեց բարձրանալ նրստել, բայց չկարողացավ. ուժերն արդեն ուսուովել եին:

— Մեռնում եմ, ասաց ու թույլ ժպտաց:

Յես թույլ չտվեցի շարունակելու, վորովհետև խոսելը շատ ֆնաս էր. ամեն բուպե կարող էր հազը սկսվել:

— Կա՛վ, լավ, գիտեմ ֆնաս է, սուս կը.

մնամ ասաց ու լուռ կծկվեց յուր փոքրիկ վերմակի տակ.

Նստած էի կողքին:

Հոգիս ցավ էր զգում, վոր այդպես շուտ, այդպես յերիտասարդ որերում նա հեռանում է մեր կյանքի պայքարից, սակայն յերբ պատկերանում էր աչքիս, վոր նա առաջինը չէ, բուռն ցանկության անզուսպ տենչ էի զգում, վոր ալիքի մի հարվածով վերջ դրվի այդ անթիվ հայտանի ու անհայտ զոհերին, վոր նա վերջինը լինի:

Ո՞ւշ էր. նա թմբած էր ու թվում էր, վոր քնած է:

Յես ել պատկեցի կողքին, անձնատուր մտքերիս ծովին:

Լույսը նոր էր բացվում, առավոտյան այգի գունագեղ շողերը նոր էին տարածվել ու լեռնազապթներից կամացուկ ցած սահելով գետնին էին ընկնում:

Նա իրեն վատ չէր զգում:


Իմ սրտում սկսեց առկայծել հույսի մի թույլ շողք, սակայն նա շատ էր խափուսիկ:

Յեվ արևի շողերը հենց նոր էին գետնին գիպել, յերբ նա մի ուժգին ցնցումով

Թեքվեց դեպի ինձ, թափով բռնեց ձեռքս
 ու մի ակնթարթ հետո անկյանք ընկավ
 անկողնուն, հավիտենապես փակելով յուր
 արեւի կարմիր փայլը տենչացող աչքերը:

Առավոտը բացվում էր...





ԳԱԼԻՔԻ ՀՈՒՅՍՈՎ

Մարգոն քնած է մուշ-մուշ: Թեև քնած է, բայց կարծես յերազի մեջ ինչ վոր ձայներ, փոփերի թխկթխկոց ու աղմուկ է լսում:

Հանկարծ մեկը ձեռքը կոխում է նրա բարձի տակ ու քիչ բարձրացնում. կարծես մի բան է փնտռում:

Յերեկ հարեան փոքրիկ գիժ Սաքոն է, վոր յուր տիկնիկն է գողանում. յերեկ յերբ մայրիկը զամբյուղում յեղած մանր կտորները փայտի վրա փաթաթեց ու տիկնիկ շինեց իր համար, Սաքոն ներկա էր ու շատ հավանեց. աչքը միշտ վրան էր: Անպիտանը հարմար ժամանակ է գտել ու ծածուկ ներս մտել տուն, վոր գողանա:

Մարգոն բաց է անում աչքերն ու դարձանում:

Թեև ուշ է, կես գիշեր, բայց սենյակը լցված են բազմաթիվ անձանոթ, բարձր-բարձր մարդիկ, վորոնք բոլորն էլ թրեր ունին կախած կողքերից, իսկ վոտքերին զնգզնգան, բարձր ու փայլուն կոշիկներ:

Ինչ յերկար-յերկար բեխեր ունեն:

Յերկու հոգի կանգնած են դռան մոտ, իսկ մյուսները քրքրում են տան անկյուններն ու մի բանի քան գալիս:

Նա ուզում է դուրս գալ անկողնից, վազել զամբյուղը քրքրող մարդու մոտ, քաշքշել նրա յերկար բեխերն ու բարկանալ վրան, վոր մայրիկի խնամքով դարսած շորերն աշնպես կոպտորեն քրքրում է դես ու դեն է պցում, բայց ծուլանում է. աշնպես լավ է ձգձգվել տաք վերմակի տակ:

— Վնաս չունի, մտածում է նա, մայրիկը ելի կդարսի. լույսը կբացվի ու մայրիկի հետ միասին կդարսեն:

Մարդոն ավելի է փաթաթվում վերմակի մեջ ու նայում հետաքրքիր:

Ահա նրանք վերջացրին. մեկը նստեց սեղանի մոտ, վերցրեց թուղթ ու գրիչ, ըսկսեց գրել:

Այդ եւ ինչ գրել ե. հայրիկն այդպես
չի գրում:

Նա գրելուս քաշվում ե իր սենյակը,
դռները լավ ծածկում ու մենակ, ժամեր
շարունակ նստած սեղանի մոտ գրում ե
յերկար-յերկար թղթերի վրա, հետո մի
կամ մի քանի որից բերում ե մեծ մեծ
թերթեր, գրքեր ու ցույց տալիս մայրի-
կին, վոր իր գրածը տպվել ե: Այդ մասին
Մարգոն շատ ե լսել, մի քանի անգամ ել
տեսել ե, ինչպես մայրիկը բարկացել ե
վրան, լաց յեղել ու խնդրել, վոր գրելը
թողնի, բայց իհարկե, հայրիկը գրելը չի
թողել ե Մարգոն դրա համար շատ ե սի-
րում հայրիկին, վորովհետեւ ամեն անգամ,
յերբ գրում վերջացնում ե, նա շատ ուրախ
ու բարի ե լինում:

Մեծ բեխերով մարդը դադարեց գրե-
լուց, հազաց ու սկսեց ծանր-ծանր կարգալ
գրածը, վորից Մարգոն վռչինչ չհասկացավ,
հետո տվեց հայրիկին, վորն առավ ու ինքն
ել շտապ մի բան գրեց:

Բայց ինչո՞ւ մայրիկն սկսեց լաց լի-
նել: Նա ուրիշների մոտ յերբեք լաց չի

յեղել, ել ինչո՞ւ եւ այդպիսի հիմար բան անում:

Մեծ բեխերով մարդը կանգնեց ու դառնալով հայրիկին, ինչ վոր բան ասաց: Հայրիկն անկյունից վերցրեց վերարկուն, հագավ, առավ գլխարկը:

Այս ուշ գիշերին ու ցրտին ո՞ւր ե գնալու:

Յերբեք չեր պատահել, վոր հայրիկը դուրս գնալուս այդպես խրատներ տար մայրիկին, գրկեր ու համբուրեր: Ահա նա մոտենում ե իրեն, խոնարհվում վրան ու յերկար-յերկար համբուրում:

— Ո՞ւր ես գնում, հայրիկ, — հարցնում ե նա:

— Փնում եմ արդարություն բերելու, — ասում ե նա ու շտապ դռներին մոտենում:

— Շո՞ւտ կգաս, — կրկին հարցնում ե Մարգոն:

— Կաշխատեմ շուտ գալ. դու խելոք ազջիկ կլինես, մայրիկիդ չես բարկացնի ու կսպասես ինձ, — պատասխանում ե նա դռննրի մոտ ու անձանոթ մարդկանց հետ դուրս գնում:

Մայրիկը դեռ շարունակում և լաց լինել:

Մարգոն ել չի կարողանում պառկած ձնալ: Դուրս և գալիս անկողնուց ու վազելով ընկնում նրա գիրկը:

— Ինչո՞ւ յես լաց լինում մայրիկ:

— Վռչինչ, բալիկ, — ասում և մայրն ու գրկում նրան:


— Հայրիկը շո՞ւտ կգա:

— Ձե, բալիկ, շատ կուշանա:

— Ինչո՞ւ, արդարութ՞յունը վո՞րտեղ և վոր:

— Շատ և հեռու, ուրիշ աշխարհներում:

Մարգոն տխրում և, հայրիկը խաբեց, ուրեմն կուշանա, բա ել ո՞վ իրեն կառնի ծնկներին ու վեր-վեր կթոցնի. նա աչնալիս լավ և անում այդ:



Անցան տարիներ, ամանջանքով, սովամահ լինելու սարսափով ի տարիներ, յերբ

մայրը, իր սիրելի, քնքույշ մայրը մի կըտոր քարթու հաց ձեռք բերելու համար ըստիպված եր սրա ու նրա դռանն աշխատել, գիշեր ցերեկ ասեղ ու թել բանեցնել, շատ անգամ ել խոհանոցի սև աշխատանք կատարել:

Մարգոն այժմ մեծ աղջիկ է, սովորում է դպրոցում:

Նա այժմ հասկացել է, թե ինչի՞ մասին եր գրում հայրն այն ժամանակ փակված իր սենյակում և ի՞նչն եր, վոր այնպես մտահոգ եր դարձրել նրան և ի՞նչ գալիքի ձգտումով եր վողևորված:

Տնտեսական անսահման կարիքը ըստիպեց նրան շուտ թողնել դպրոցը և գործի մտնել:

Մայրն արդեն հիվանդության աստիճան թուլացել եր, աչքերի լույսը պակասել, ել չեր կարողանում բաժարարել վարձողների խիստ պահանջներին և քիչ չեյին այնպիսի գառն որեր, յերբ մայր ու աղջիկ դատապարտված եյին լինում ծոմ պահելու կամ ցուրտ սենյակում միմիանց գրկում կուշ գալու մի՛ անդին պատահոտած վերմակի տակ:

Յեւ չհակառակ իր սովորելու բուռն ցանկության, հակառակ մոր թաղանձանքներին, նա այլևս անկարող մոր վրա ծանրանալու, անկարող այլևս կրելու նրա հիվանդագին հառաչանքները, դպրոցը թողեց ու գործի մտալ մի թեյարանում, վորպէս մատուցող:



Ուրախ եր Մարգոն ու պարծենում, վոր իր հայրիկն այդ անարդարության դեմ պայքարելու համար և զոհվել, բայց լաց եր լինում նրա կուսական սիրտը, վոր նա չկարողացաւ հասնել իր նպատակին, վոր չթողեցին «արդարությունը բերելու»: Յեւ վողեւորված նրա հիշատակով ու զինված հաւատով, նա հոր գծած ուղին բռնած, գրնում եր աներեր:

Բազմաթիւ էին նրանք, վորոնք լծված էին այդ ծանր աշխատանքին և միլլիոններ ու անթիւ հազարներ էին նրանք, վորոնք այդ բողեւին էին սպասում, վորոնք անյայտ միմիանց, հեռու մի-

մշանցից, աշխարհի բոլոր ծայրերում սը-
փոված, իրենց հետ ելին, իրենց գործին,
իրենց քայլին հետևում:

Ու Մարգոն պնդում էր միշտ.—

— Մայրիկ, հոգ չե, վոր հայրիկն ըն-
կավ, հոգ չե, վոր շատերն ընկան, վոր պեռ
եկի շատերն ել պիտի ընկնեն... մենք ան-
թիվ ենք, անսպառ, մեր ցնցումից պիտի
ճեղքվի աշխարհը, պիտի կանգնի կյանքը
ու ֆենիքսի պես վերակենդանանա իր մոխ-
րակույտից: Կգա այդ որը, նա հեռու չե...
հեռու չե...

*
* *
*

Արդեն մեծացած, մի գեղեցիկ աղջիկ
էր նա, բայց ոտար կյանքի վայելքներին,
հեռու կանոցիական պճրանքերից, հեռու
անհատական հրապույրներից ու տարված
կյանքի վերանորոգման համառ աշխատան-
քով:

Այրուղ ելին նրա խոսքերն ու կրակի
պես դտող:

Հուր էր հոգին ու շոգափայլ աչն հե-

ռուները, դեպի ուր ձգում, տանում եր նա մարդկանց:

Փոքրիկ եր, դեռ տիկնիկ եր խաղում, յերբ կրակի բոցերն ընկան նրա հոգումեջ, պահվեցին ծածուկ, հսկա հրդեհի համար բոցավառվելու անմար հավատով:

Ձե՞ հայրն ասաց «կսպասես ինձ»...
Նա կգա, անպայման կգա:

Պետք է աշխատել...

Պետք է աշխատել:

*
* * *

Բնականից խելացի ու կյանքի ծանրագույն բեռան տակ դեռ մանուկ հասակից ճնշված, նա արագ կերպով կարողանում եր ըմբռնել իր շուրջն անցած դարձածը, տեսնել այն հսկայական անարդարությունը, վոր կա կյանքում, վոր բուն է դրել մարդկանց մեջ:

Առավոտից մինչև ուշ գիշեր նա թեյարանում տեսնում եր բազմաթիվ մարդկանց, միմյանցից տարբեր, միմյանց անծանոթ, բայց իրենց մտածմունքներով միմյանց նման, հարազատ:


Նա իր շրջահայաց աչքերով տեսնում
ու սուր ականջներով լսում էր, վոր մարդը
մարդու դեմ է, վոր յուրաքանչյուրը կառ-
չած կյանքին, մյուսի մեջքին նստելու
տենչանքն ունի, վորպեսզի իր գոյությունը
առանց սեփական քրտինքի ստեղծի:

Յեվ ուշ գիշերներին, աշխատանքից
հոգնած, վերադառնալով տուն, փարվում
էր մորը, պատմում էր տեսած ու լսած
անարդարությունների մասին ու պնդում.
համառորեն կրկնում.—

— Վոչ, այսպես չի մնա կյանքը, նա
անպայման կփոխվի, նա պիտի փոխվի:

— Զե՛, զավակս, ասում էր մայրը իր
թույլ, նվաղած ձայնով, այդ չի լինի:
Հայրդ ել էր ասում, նա ինքն ել զոհ գը-
նաց, բայց տեսնում ես, վոր մինչև այժմ
դեռ վոչինչ, վոչինչ չի փոխվել: Շատ են
ուժեղ բոլոր այդ տերերը և շատ է ուժեղ
նրանց դրամը, անհնար է շարժել նրանց
իրենց կանգնած տեղից: Զգույշ զավակս,
մերն եսպես յեկել, եսպես ել կերթա:

Բայց Մարգոն հավատում էր, հավա-
տում, վոր այդպես չի մնա:



Հասավ այդ որը:

Տառապածները, հալածվածներն ու զրկվածները հոժ ու սեղմ շարքերով փողոց դուրս յեկած, իրենց կամքի թելադրանքով թոթափած բեռների ծանրությունը, իրենց ապրումի ձևն եյին կերտում:

Կարմիր արյունով ներկված կարմիր դրոշակների ծովն եր ալեկոծվում զնզուն զեփյուռից ու կրակոտ խոսքերն եյին թռուչում ամենուր:

Քայլում եր Մարգոն, նրա աչքերն ալ բոցերի պես առկայծում եյին:

Քայլում եր նա լայն փողոցով, հոժ բազմության հետ՝ նրան ղեկավար՝ վեհ ու հպարտ ու վերհիշում այն յերեկոն, յերբ այն յերկար բխերով մարդիկ տակն ու վրա արին իրենց տունը, յերբ հայրիկին տարան ու մայրիկին արյուն-արցունքը բաժին թողեցին:

Քայլում եր նա հրավառ սրտով ու պատկերում այն նոր կյանքը, վոր դարբնվելու և այդ որից:

Ու կարծես աշունը չեր, վոր իր ցուրտ

բերնով տարուբերում եր ծառերի կատար-
 ներն ու տերևները մաղում գետնին, այլ
 զարունը, նորափթիթ զարունն եր անուշ
 դալալով յերկրի զարթնումի վողջունը
 կարդում:



Անգործութեան որերին եր:

Թեոսի խնայած դրամն ու պաշարն արդեն վերջացել եր. դե հեշտ չե հինգ հոգուց ընտանիք պահել, յերբ յերեխաներից մեծը յոթ տարեկան ե, իսկ փոքրը դեռ մոր կերակրելու կարիքն ե զգում, մանավանդ քաղաքը գյուղից կտրված՝ զուրկ ե պարենից ե գներն ել որե որ ավելանում են, յերբ յեղածն ել շուկա յե հանվում այնքան քիչ քանակութեամբ:

Թեոսը հյուան եր, լավ վարպետ, սակայն այժմ ո՞վ ե փայտի կարասիներ կամ տներ շինում. յեղածն են շուկա հանում, տները քանդվում են ե վերանորոգող չկա:

Ու գուր եյին անցնում նրա փնտռումները ամեն ուր, մի գործ, թեկուզ շատ փոքրիկ վարձատրությամբ աշխատանք գտնելու, վորպեսզի գոնե վորպես բանվոր, պետական փոներից եժան հաց կարողանա գնել:

Չմեռն ել վրա յե հասնում:

Արդեն ցրտում ե. քամիները սառն են ու ծառերը մերկացել են տերեւներից:

Վաղուց գրվել ե աշխատանքի բորսայում, բայց հակառակ բան ե, վոչ մի տեղից պահանջ չկա: Յուր պես անգործներ քիչ չեն ե ի հարկե բոլորն ել դժվարին պայմաններում:

Տանն ել նստել չի կարողանում:

Դե ինչպես կարողանա, քանի վոր տաշնը մնալով շարունակ տեսնում ե կիսամերկ ու քաղցած յերեխաներին, շարունակ հառաչող կնոջը, վորը թեև չի բողոքում, չի բարկանում վրան, բայց նրա ամեն մի նայվածքից սիրտը կտրատվում ե ու ավելի վատ գույներով ե պատկերանում իր առաջ վաղվա ուրը:

Այդ ուր դրությունն ավելի վատ եր:

Վորքան ել խնայողությամբ բանեցնեյին, յեղած հացը հազիվ յերկու ուր բավականացնեի:

Ուրեմն աշնունհետե նրա ընտանիքի առաջ բացվում եին քաղցի լայն դռները:

Այդ ուր առաջին անգամ կինը փոքրիկին գիրկն առած, նստած անկյունում, լուռ արտասովում եր:

Այդ բավական եր, դրության ահռելի պատկերն ըմբռնելու համար և թեոսն ուղղակի դուրս փափավ տանից:

Յերկար թափառում եր նա փողոցի փողոց ու իր դրությունից յեկնելու վոչ մի յեղք չեի գտնում:

Աննպատակ ու անորոշ եյին քայլերը և գուր մտածումները:

Յեւ քայլում եր ու կարծես մի ինչ վոր անսովոր յերևույթի, մի հրաշքի սպասում:

Անգիտակցարար դուրս եր յեկել քաղաքից ու հասել կայարան, ուր այս ու այն պատի տակ, այս ու այն խումբ ծառերի մեջ բազմաթիվ մարդիկ անապատառն, շատերը հիվանդ, փախսաների մեջ ծվարած,

իրենց աննախանձելի որն էյին ապրում:

Հոգնած եր:

Անցավ ծառերի կողմն ու պառկեց գիտնին:

Յերկար եր անցել և յերբ վեր յելավ, արդեն յերեկո յեր:

Դանդաղ քայլերով վերադառնում եր կայարանի հատու ճամփով, յերբ քանդված մի ավերակի մոտով անցնելուս, հանկարծ լսեց, վոր մեկը կանչում և իրեն:

Նա զարմացած դեռ ու դեն նայեց, բայց վոչ վոքի չտեսավ. միայն ճամփից քիչ դուրս մի մարդ եր պառկած խոնավ հողի վրա:

Ուզում եր անցել, մտածելով, վոր իրեն թվաց, թե կանչող յեղավ, յերբ կրկին լսեց իր անունը և զարմանքով տեսավ, վոր այն պառկած մարդն և:

Մոռեցավ:

Ու զարմանքից ճչաց:

Նա իր վաղեմի ընկերներից եր:

Քանի որ առաջ յեկել եր գործ գտնելու հույսով, վորովհետև ընտանիքը պահելու ալկա վոչ մի միջոց չուներ, ճանապար-

հին հիվանդացել եր ու զուրկ ամեն միջոցից, պառկած եր այդտեղ, քաղցած ու հիվանդ և յերբեմն անցորդները ընդունելով մուրացկանի տեղ, մի բան եյին տվել, վորով և ազատվել եր մեռնելուց։

Լսում եր Թեոսը նրա աղեկտուր պատմությունը ու մի ուժգին պայքար եր տեղի ունենում նրա հոգու մեջ։

Ի՞նչ կարող ե անել նա յուր վատաբաղդ ընկերոջ համար, յերբ ինքն և՛ ոգնության կարոտ և մի յերկու որից յետո վողորմություն հայցելու պիտի յելնի, վորպեսզի իր մանկիկներին սովից ազատի։

Բայց մի՞թե միևնույնը չե, մեկ որ շուտ կամ մեկ որ ուշ...

Ու պայծառացավ նրա հոգին, մոռացվեց կրած տառապանքը, հեռացան բոլոր տխուր մտապատկերները։ Բարձրացրեց ընկերոջը, մտավ նրա թևն ու դանդաղորեն առաջ շարժվեցին։

Մուլթն եր արդեն, յերբ տուն հասան։

Յեվ յերբ դռնից ներս մտան, նա ժրպտում եր պայծառ և ուրախ ձայնով դարձավ կնոջը.—

— Սոված ե, հաց բեր թող ուտի:

Իսկ յերբ ընկերը դանդաղորեն ծամում եր փոքրիկների բաժին հացը, նա նայում եր նրան յերջանիկ ժպիտով:



Մ Ա Ն Կ Ի Կ Ը

Փոքրիկ, վտիտ, ցնցոտների մեջ փաթաթված մանուկ եր նա հոգնածություն և անհուն վիշտ արտահայտող սև աչքերով:

Ո՛վ եր նա, վոչ վոք չգիտեր և չեյին ել հետաքրքրվում:

Այնքան նրա նմանները կային, վոր շատ անգամ զանազանել անգամ չեր լինում և ի՞նչ կարիք ել ունեյին մարդիկ, այն ել այնպես պճնված և ինքնագոհ, զանազանելու նրան ուրիշներից:

Մի մուրացկան եր ուրիշ վոչինչ:

Կմոտենար, հետևիցդ մի քանի քայլ կգար ու աղերսական ձայնով, կամացուկ կխնդրեր. —

—Հիսուսն հաղար տա՛ս... սոված եմ...
Յերբեմն տալիս եյին, բայց շատ ան-
գամ մերժում:

Ու նա հեռանում եր լուռ, մոտենում
մի ուրիշին ու կրկին լսում եյիր.—

—Հիսուսն հաղար տա՛ս... սոված եմ...

Մի կերպ քաշ եր տալիս իր քաղցած
գոյությունը:

Յերբ ուշ գիշերներին քաղաքային
այգին ու Արովյան փողոցը դատարկվում
եյին, նա կծկվում եր խանութներից վորևե
մեկի անկյունում գետնին ու քնում:

Մի առավոտ, յերբ հացավաճառը բաց
եր անում իր խանութը, նկատեց, վոր մի
փոքրիկ մուրացկան, մեջքը խանութի դռա-
նը հենած, քնած է:

Վտաքով խփեց արթնացնելու, սակայն
նա անշարժ եր:

Խոնարհվեց վրան մի կողմ քաշելու և
յերբ ձեռքը կպավ նրա սառած մարմնին,
հասկացավ, վոր նա գուցե հենց նոր կամ
մի քանի ժամ առաջ մեռել եր:

Ու ճանաչեց այն փոքրիկ, ցնցոտիների
մեջ փաթաթված սև, խորունկ վիշտ ար-

տահայտող աչքեր ունեցող մանկան, վորը
երեկ ուշ յերեկոյան այնպես աղերսում եր
իրեն մի կտոր հաց տալու և վորին նա
կոպտորեն մերժեց:

Յերեկ փոքրիկի բաղդը թեքվիլ եր:

Ամբողջ որը վոչ վոքից չկարողացավ
վոչինչ ստանալ:

Մինչև ճաշ դեռ մի կերպ անցկացրեց,
շուկայում թափթփված թուփ ու տերեւներ
հավաքել ուտելով, սակայն յերեկոյան դեռ
դրութ յունն արդեն անտանելի եր:

Քաղցն այնպես եր սաստկացել, ստա-
մոքսը կծկվել ու աղաչական պահանջ անում,
վոր նա ուժասպառ, քայլել ել չեր կարո-
ղանում. բայց մի անգամ ել փորձեց, մա-
նավանդ, վոր զբոսավայրն արդեն լիքն եր
մարդկանցով:

Հուսակտուր ու համբորեն անցնում եր
նա խանութների մոտով: Ահա փուռը: Ինչ-
քան շատ հաց կա այնտեղ, դարսած միմի-
յանց վրա, դարակների մեջ: Դե ի՞նչ պիտի
պակսի, յեթե մի կտոր, մի փոքրիկ կտոր
իրեն տան: Շատ չի ուզում, այնքան, վոր
կարողանա մի կերպ հանգստացնել ստա-
մոքսը:

Մոտեցավ, կանգնեց շեմքին, լուռ, հոգնած աչքերը իրենից այնքան մոտիկ հայերին ուղղած:

Հացավաճառն անուշ-անուշ խոսելով հաճախորդների համար հաց եր կշռում:

— Ինչ բարի մարդ ե, մտածում եր մանուկը, չի մերժի, մի կտոր, մի փոքր կտոր կտա, անպայման կտա:

Յերբ հաճախորդները հեռացան, աղան զգուշությամբ ներս մտավ խանութ և վիզը ճկած, կանգնեց դռան մոտ:

— Աղա...

— Դու եյիր պակաս... դուրս կորիր, գոռաց խանութպանը:

Տղան ելավ խանութից արցունքներն աչքերին, կանգնեց մայթին անորոշ, ապա քաշվեց անկյունը, պատի տակ, նըստեց գետին ու անձայն արտասովեց:

Փողոցները դատարկվեցին, ել վոշ վոք չկար, յերբեմն յերբեմն լավում եր քաղաքապահների ազդանշանի սուլոցը:


Պառկեց, գալարվեց գետնին... ու նվաց...

Յերկար լավում եր նրա նվոցը...

Յեվ այն տոավոտ, յերբ գիշերապահ-

ները գտան նրա դիակը փողոցում, վռնվոք,
բացի հացավաճառից, չիմացավ, վոր դա
այն փոքրիկ, այն վախտ մանկիկն էր, վոր
կգար կկանգներ ձեր առաջ իր հոգնած ու
անհուն վշտով լեցուն աչքերը վրադ հառած
կխնդրեր.—

— Հիսուն հազար տաս...



ԱՐԶԱՎԻՐՔԻ ՈՐԵՐԻՑ

Յեա հանդիպեցի նրանց ոգնության կոմիտեյի հագուստի բաշխման կետում բազմության մեջ:

Դեմքերը ծանոթ եր յերևում, պրպրտում եի հիշողությանս մեջ նրանց պատկերը, բայց դժվարանում եի վերհիշել:

Այնպե՛ս խեղճ ու այնպե՛ս գզգզուն կանգնած եին նրանք պատի տակ, գլուխները խոնարհ ու հերթի եին սպասում, մինչ շատերն աղմկում, հրհրում, բողոքում, հայհոյում եին:

Նայում եի ու չեի վերհիշում:

Մի բոպե միտքս թռավ հեռու, այն-

տեղ, ուր մի տարի առաջ ուսուցիչ էի և ուր անցել եին իմ կյանքի լավագույն որերն ու թվում եր թե նրանց այնտեղ պիտի հանդիպած լինեի:

Փոքրիկը նայեց, ապա դառնալով մեծին, մի բան ասաց, ինձ վրա ցույց տալով: Մեծը նայեց, հետո գլուխը խոնարհեց ու թեև հեռու էի, սակայն զգացի, վոր նա խորը հառաչեց:

Այդ բոլորին կարդացին նրանց անուն - ազգանունները:

Ու այդ յերեք բառի հետ մի ցնցում անցավ մարմնովս:

Ճանաչեցի այն յերկու փոքրիկ, թըռվոուն աղջիկներին, վորոնք իրենց ծնողների թեվի տակ ապահով, նման էին յերկու ճուղողուն թռչնակների, առանց հոգսի, անգիտակ աշխարհի չարին ու ծավալուն թշնամանքին, վոր կյանքում տեսնում էին միայն բնությունն յուր զարդարուն կանաչներով ու ծաղիկներով, յուր կենսատու արևի վառ ճառագայթներով, յուր լայնարձակ հանդ ու արոտներով և անսորբի անհունությունն ընդգրկած լայնեզր ծովերով:

Նրանց հոր ձեռքերի կոշտերի շնորհիվ բարեկից եր նրանց տունը, միշտ ուրախ ու ծիծաղկոտ և բաց բոլոր կարոտյալների ու հոգնածների համար:

Սիրում եին նրան բոլորը, պատկառում ու հարգում վորպես աշխատանքի կենդանի որինակ և խրախույս բոլոր ընկճվողների:

Սակայն հասան ազգամիջյան կռիվները:

Անհատներն իրենց ոխակալած ուղեղի թույնով զինված, պարուրված ազգայնական փայլվիլուն քղամիտով, մարդկանց սրտերում ատելության հուր պատվաստեցին ու բորբոքեցին այն միմյանց դեմ:

Ուժեղների մատի շարժումով տարվող յերկու փոքրիկ ու թույլ ժողովուրդ ատամներ կրճտացնելով միմիանց դեմ և հավատացած, վոր կյանքը կը վերածնվի և ամեն ուր յերջանկություն կը տիրե, յեթե իրենցից մեկն ու մեկը իսպառ վոչնչանա, վայրի գազանների նման կոտորում եին միմյանց, ավեր ու մահ սփռելով իրենց անցած ճամբքում:

Միմյաճնց դեմ յեկած, սկսեցին ավերել գյուղեր, քաղաքներ, շին տներ ու կյանքեր...

Յեւ ըստ Նրանք, վոր յերկյուղած պատկառանք եին զգում դեպի այդ փոքրիկների հայրը, կանգ չառան այդ զգացումից ու Նրան ել յուր տան շեմքում սրախողխող վայր գլորեցին, առևանգեցին կանանց ու բավականության քրքիջով վերադարձան ավարով ու գերիներով, իրենց տները հանգստանալու, վոր ուժ հավաքեն նոր նախճիրների համար:


Յերկու վորքերին պահում եին գրաստի պես, որական մի կտոր չոր հաց տալով և յերբ ձանձրացան, անասունների պես մի քանի կտոր հագուստով փոխանակեցին:


Յերկու տարվա մոտ ձեռքից ձեռք անցնելով, այս ու այն դռանը, այս ու այն անկյունում, իրենց փոքր հասակում զոհ դառած անասնացած լպիրշ մարդկանց կրքերին ու փալասի պես դեն շպրտված, վերջապես Նրանք ազատվել ու այստեղ եին յեկել:

Յերբ մեծը պատմում եր ինձ այդ,

ես սրտի անհուն կսկիծով պատկերա-
 ցնում եի նրանց կրած բարոյական ու ֆի-
 ղիքական զրկանքները, վեր հիշելով
 այն սոսկումները, վոր ապրեցին յերկու
 ժողովուրդ տարիներ շարունակ՝ թույնի
 պատվաստման ուշաթափությամբ (տար-
 ված, վորի ցայտուն որինակը՝ այդ յերկու
 կենդանի դիալեկները կծկված միմյանց, ար-
 ցունքոտ աչքերով ու հառաչող սրտերով
 պատմում եին իրենց դառնության որեր/
 մասին ու վողջ եությամբ հարցնում.—

— Ինչո՞ւ...





ՀՐԱԺԵՇՏԻ ԺՊԻՏԸ

(Շ. Ֆուլիբ)

Յերբ մահվան վճիռը կարգացվեց, տի-
կին դե-Պերյուսին չընկճվեց, այլ դուրս յե-
կավ յեղափոխական ամբիոնից, գլուխը հը-
պարտորեն վեր պահած ու արհամարհանքի
ժպիտը շուրթերին:

Դեպի բանտը դառնալու ժամանակ
նրա մոտ յերկաց ինչ վոր մի ստովեր և նա
դպաց իր ձեռքում թղթի մի փոքրիկ կտոր
իսկ ստովերն անհայտացավ նույնպես յան-
կարծակի, ինչպես յերկացել էր:

Տիկին դե-Պերյուսին վոչ մի շարժու-
մով չմատնեց իրեն, նրա դեմքի վրա չը-
շարժվեց անգամ վոչ մի մկան. նա նույն-

պես հանգիստ ու անտարբեր շարունակեց իր ճանապարհը:

Նրան բերեցին ընդարձակ ընդհանուր սենյակը, ուր ժողովված էյին և մյուս դատապարտյալները: Նրանք բավական շատ էյին: Նա խկույն նկատեց, վոր նրանց մեջ և գտնվում յայտնի խուզարկուն:

Հարմար ըսպես գտնելով, տիկին դեպի յուսին մոտեցավ պատուհանին ու դողդոջուն ձեռքերով բացեց թուղթը: Նրա ձեռքումն էր ծեր, անձնվեր դայակի գրությունը: Ազահորեն կարդաց նա արագ գրած տողերը:

— «Մենք պատուհանի մոտ կլինենք: Յես ձեռքերիս վրա կրարձրացնեմ մեր սիրելի մանկիկին, վորպեսզի նա կարողանա վերջին հրաժեշտը տալ իր խեղճ մայրիկին»:

Դեռատի կինը կենդանացավ, կարդալով այդ յերկտողը: Աստված, նա կտեսնի իր աղջկան:

Վճռական ըսպեն մոտենում էր: Դատապարտյալներին խմբերի էյին բաժանում, վերջին ուղին ուղարկելու համար: Քահա-

նա՛ն շրջու՛մ եր շարքերի մեջ, բայց շատե-
րը հրաժարվում էյին նրա վերջին սուրբ
հաղորդությունից:

Տիկին դե-Պերյուսիին մոտեցավ դա-
հիճը, խնդրեց նստել ու առաջը դրեց կո-
ղովիկը: Յերբ նա բաց արեց կողովիկը, տի-
կին դե-Պերյուսիին տեսավ, վոր նա լիքն է
ամեն գույնի մազերով. շագանակագույն,
սև, վոսկեգույն, ուղիղ, ալիքավոր և... ար-
ցունքով ոծված: Սառը մկրատը հավեց նը-
րան, նա անզգայորեն սարսռաց. մի բռակե-
լից հետո նրա մազերն ել պառկած էյին
սարսափելի կողովում:

Դեռատի կինը շուռ յեկավ, նրա կո-
կորդը բռնվեց կուտակված հառաչանքնե-
րից: Վորպեսզի հանգստանա, նա սկսեց մը-
տածել իր չքնաղ յերեխայի մասին, ինչպես
կտեսնի նրան յերկար բաժանումից հետո
արգեն նոր, հավիտենական կյանքից առաջ:

Կարո՞ղ ե գտնել արդյոք ամբոխի մեջ:
Միայն տեսնի նրար: Մահը նրա հա-
մար քաղցր կլինի, յեթե իր հետ տանի իր
սիրելի յերեխայի պատկերը:

Սուզարկուի սուր, ճղճղան ձայնը ներս

խցկվեց նրա ցնորքների մեջ:

Նա ինչ վոր մարդու մոտ պաշտենում
էր իր սխրագործություններով:

Ո՛ր, այժմ էս բոլորովին նոր սխտեմ
ունեմ: Արժե միթե չարչարվել, ամբողջ
Պարիզը չափչփել, յերբ կարելի յե դահճի
համար գործ գտնել բոլորովին այլ միջո-
ցով: Իմ մասնագիտությունը՝ դատապարտ-
վածների ազգականներն ու բարեկամներն
են: Համարյա բոլորն էլ ունեն այդպիսի-
ները: Դեպի եշաֆոտը՝ ճանապարհին՝ դա-
տապարտյալները աչքերով փնտռում են
նրանց, յերբ նրանք կանգնած են թագնը-
ված ամբոխում, կամ վորեւ պատշգամբում:
Հենց այդ տեղ էլ յես աշխատում եմ բռնել
դատապարտյալի հայացքը, ժպիտը, վոր
հազիվ նկատելի յե կողմնակիներին: Իսկ
յերբ յես վորեւ կասկածելի բան եմ նկա-
տում, իսկույն բանտարկում եմ: Այդ բանի
համար յես սուր աչք ունիմ և հազիվ թե
սխալվեմ: Ճարպիկ ե մտածված, չե՞: Աշխա-
տանքը քիչ, իսկ վարձատրությունը՝
հանցագործների բանտարկության համար՝
ավելի շատ:

Տիկին դե-Պերյուսին սարսափից սա-
ռեց: Նրա յուրաքանչյուր բառը անտանելի
ցավով ծակծկում էր նրա ուղեղը: Նրան
թվում էր, Վոր դահիճի մկրատը նորից իր
սառը բերանով կաշում է իրեն, բայց այս
անգամ կտրում են Վոշ թե մազերը, այլ
սիրտը...

Դատապարտյալի վերջին արդ ու զար-
դը վերջացած էր: Թուլացած դեռատի կինը
անուշ ընկավ պատի մոտի նստարանի վրա:
Նա դողում էր ցրտից. կարծես կտրելով
մազերը, նրան ամբողջովին մերկացրել
էին:

Ակամա շարժումով նա կամեցավ ծած-
կել իր խուզած գլուխը, բայց դահիճը ա-
մենաբարեսիրտ տոնով նկատեց:

— Արժե՞ միթե այժմ:

Տիկին դե-Պերյուսին իր հուսահատու-
թյան մեջ քարացավ: Մի միտք ծանր պը-
տավում էր նրա գլխում. նրան չի հաջողվի
խաբել խուզարկուին: Նույնիսկ եշաֆոտի
մոտ, մահվան բոպեյին, չի կարող թափնվել
նրա հայացքից: Նա կրկին դողաց ընդար-
մացնող սարսուռից. նրա հրաժեշտի ժպի-

տը, հայացքը կմատնեն նրա աղջկան, կը-
հանձնեն նրան դահիճի ձեռքը:

— Ժամանակ է, քաղաքացուհի:

Նա բարձրացավ, վորպես ինքնաշարժ
մեքենա: Նրա մեջ այլևս կյանք չկար, այլ
մի տանջող փափագ՝ տեսնել աղջկան: Իսկ
հոգում մեծանում էր մի սարսափելի կռիվ:

Ինչպես յերազում, չկարողանալով վո-
րոշել դեմքը, չլսելով վոչ շղթաների ձայնը,
վոչ խոսակցությունները, մյուսների հետ
նա մտավ բակը: Նրանց շրջապատեցին հե-
ծյալ ժանդարմները ու ազգային գվարդիայի
զինվորները: Տխուր գնացքը շարժվեց:

Մաքուր ողբ քիչ կենդանացրեց խեղ-
ճին: Թռուցիկ հայացք գցեց ամբոխի վրա.
նրան տանջողը գնում էր մի քանի քայլ
հեռու, աչքերը չհեռացնելով նրանից: Նա
ցնորվեց:

— Ձի կարելի բարձրացնել աչքերը, չի
կարելի տեսնել պատուհանում իմ աղջկան.,
ի՞նչ կլինի նրա հետ, յեթե մեր խեղճ դա-
յակին բանտարկեն: Յեթե յես նրան տես-
նեմ, չեմ կարող զսպել, կմատնեմ ինձ: Այդ
սարսափելի մարդը կորսա հայացքս: Նա
կգտնի նրանց ու կբռնի:

Գնացքը շարժվում էր Պարիզի մար-
դաշատ փողոցներով: Ամբոխը մեծանում էր
աղմկահուլալ, կռուիտ: Մահը մոտենում էր:
Բայց այդ մասին չէր մտածում զեռատի
կինը. նա զգում էր, վոր խուզարկուի աչ-
քերը աչալրջությամբ հետևում են իր յու-
րաքանչյուր շարժումին: Նա կամեցավ դեմ-
քը ծածկել ձեռքերով, բայց ձեռքերը շրդ-
թալված էին:

Հուսահատությամբ խոնարհեց հայաց-
քը ու սկսեց նայել սայլի հատակին: Ամ-
բոխի մեջ ծաղրանքով ասացին.

—Ըհը', վախում ե:

—Այո, վախում եմ, մտածում եր նա,
վախում եմ կործանել աղջկաս ու խեղճ ծե-
րուկ դայակին: Կործանելուց եմ վախենում
և նեղացնելուց, իսկ յեթե վերջին
անգամ չնայեմ, ի՞նչ կ'մտածեն նրանք:
Միայն թե նրանք չաշխատեն գրավել հա-
յացքս: Իսկ յեթե հանկարծ նրանք ձայն
տան ինձ կամ... արտասովեն:

Գուցե մենք արդեն անցանք նրանց
մոտից: Կամ գուցե այժմ անցնելուն ենք ու
նրանք նայում են ինձ... Նա վախում է ի-

րենից այդ միտքը, վորովհետև իր վրա յեր
զգում խուզարկուի հայացքը:

Սայլը կանգ առավ: Դահլճը ծաղրա-
բար ձայնեց նրան:

— Ցած իջեք, քաղաքացուհի, հասանք:

Նա բարձրացրեց գլուխը. խուզարկուն
այդտեղ եր ու չարությամբ այրվող աչքե-
րը չեր հեռացնում նրանից: Նրա կրծքից
դուրս թռավ թեթևության հառաչանք:

— Աղջիկս փրկված է:

Ու իսկույն փայլեց չարախինդ այն
միտքը, վոր խուզարկուն կորցրեց իր պար-
զեր: Նա նույն իսկ ջղաձգարար ծիծաղեց:

Կամենալով խաբել ու յույս ներշնչել
նրան, նա ուզեց նայել ամբոխին, բայց
իսկույն և եթ կանգ առավ, վախելով, վոր
պատահամբ կարող է տեսնել բարեկամնե-
րից վորևե մեկին, վորոնք յեկել են գոնե
հայացքով վերջին հրաժեշտը տալու նրան:

Ահա և նրա հերթը: Դահլճը ոգնեց
նրան: Դեռատի կինը խոնարհվեց...

Ամեն ինչ վերջացած եր: Նրա կուպե-
րը ամուր փակվել էյին, բայց դեմքին սա-

Եւ եր յերջանիկ ժպիտը. այժմ նա յել չեր
 կարող փնտս պատճառել իր մանկան:



ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

1. Տանջանքի լարեր.
2. Կարոտի յերգեր.
3. Դեպի ապագան.



Տպագրված է. Ս. Խ. Հ. Ա. Խորհրդային տպարանում
Յերևան: 45՝ որինակ.

Թ. Զ. Գ. № 24. փետրվար 1923 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035749

[304.]

A $\frac{T}{1705}$